83 (138).

Շարղ̃ալըր ղարրա սարծավ,
Ա̈շկընէն չալըմ ձախով,
Ուղըցա ղը, էնք չուղէց,
Գարքըվիլու վախտն անցավ։

84 (139).

Իս դուկէր ի յա̈ձա̈ցը,
Ըրղը նոռ ղար յէր ձայը,
Ուղըցա ղէ, չադօր ղէ,
Պոռմ քշղից գրձա̈յը։

85 (140).

Դամը ղընհէ, գըժընդօ,
Մաքդար ղաանը, ղըխնդօ,
Ա̈շկէյն ադաղէն գվիք,
Սաղղա ալթօ, ղըխնդօ։

83 (138).

Արևելյան քամին հակառակ դարձավ,
Աղջիկներին ձև ծախեց,
Ուզեցի նրան, ինքը չուզեց,
Պսակվելու ժամանակն անցավ։

84 (139).

Ես գալիս էի ամառներից,
Երկար տուն կար իր ծոցը,
Ուզեցի դրանք չտվեց ինձ,
Բռով խփեց զույգ կրծքին։

85 (140).

Տանիքը կելնի, կժնդա,
Նամակ կառնի, կխնդա,
Աղջիկն աղոդին տվեք,
Մեռնի գնա, կխնդա։

# Բ

# ԾԻՍԱԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ

## ԽՆԱՄԷՆ ԻՐԳ

1 (141).

Հէյ, Թըռըշ* վիրո քալաշ,
Ձա̈ց ադօնք ղԱ̈վսաֆիթը քէ րալաշ։

2 (142).

Հէյ, Ծաւռկ* ախպըրգէյն,
Դöր ըղհէնգէյն բզգալը,
Հէնգէյն բղղալը՝ Սառէյը,
Դա̈բգաձ հուվը՝ վառէյը,
Ծուռէյը ինգավ գըդըրըցուվ,
Անծշ հուգը ֆիթիցավ։

3 (143).

Հէյ, խնամա̇, խնամա̇,
Սբիդօ̃ւգ գձձաք, խնամա̇,
Ալայը դվէն, ածն չըդվիր,
Լիզօա թըղ կըդրա, խնամա̇։

4 (144).

Հէյ, Ալլակ* խնամա,
Ցավան գըցանինք քամա,
Ալլակէնց հարսէն փիշէն,
Մանաալ գըխածըդի ղգիշէն։

5 (145).

Իսար գիրա̈ղէյը,
Բաբան խուշ-խուշէյը,
Նի̇դը, ախպա̈ր, նի̇դը,
Հարսօն ղումաշը դըըրը̇։

6 (146).

Խնամունք իգէն կիշիրում,
Տöսը պացէյն շշիրում,
Աբöր իփին, իղ չիկօ,
Փիսան իգիգ, ղիղ չիկօ։

## ԽՆԱՄՈՒ ԵՐԳ

1 (141).

Հէյ, Թըթըշ* մեսա պատվական,
Եղիսաբեթը ինչպե՞ս քեզ տըրի տանք։

2 (142).

Հե՜յ, Կարճլիկ* հորեղբոր կին,
Տուր հնդից փոքրիկը,
Հնդից փոքրը՝ Սառան է,
Տապկած հավը՝ վառեկ է,
Սրվակն ընկավ կոտրվեց,
Անուշ հոտը տարածվեց։

3 (143).

Հե՜յ, խնամի՛, խնամի՛,
Ճերմակ մաղով, խնամի՛,
Բոլորը տվին, դու չտվիր,
Լեզուդ կտրվի, խնամի՛։

4 (144).

Հե՜յ, Ալլակ* խնամի,
Դաշտը ցանում ենք կարտոֆիլ,
Ալլակենց հարսի փոշին,
Մանսաը կրծում է իր կաշին։

5 (145).

Այսօր կիրակի է,
Պապին ուրախ-զվարթ է,
Կրակ՛ր, եղբա՜յր, կրակ՛ր,
Հարսի օժիտը կարե՛ր։

6 (146).

Խնամիք եկան գիշերով,
Դուռը բացեցին շշերով,
Փլավն եփվեց, յուղ չկա,
Փեսան եկավ, տեղ չկա։

---

* Մականուն է։

## ՀԻՆԱ ԱՎԱԶԸ

7 (147).

Ուրբաթ գուկը թըմպըլնայն,
Շապըթ ուրն ալ՝ գուռնինայն,
Հինվա, աշկա՛յնա, հինվա,
Դըքըր գուկը քէ ուզիղ դզան։

8 (148).

Իսկը թասէն միչը
Հինօն գուշագինք,
Արգութը սանդրում
Գձձաքը գուսանդրինք։

## ՀԻՆԱՅԻ ԵՐԳ

7 (147).

Ուրբաթ կգա թմբուկը,
Շաբաթ օրն էլ՝ զուռնան,
Հինայվիր, աղջի՛կս, հինայվիր,
Մինչև կգա քեզ ուզող տղան։

8 (148).

Ոսկի թասի մեջ
Հինան ենք շաղում,
Ածաթե սանրով
Ծամերն ենք սանրում։

## ՀԱՐՍԷՆ ՊԱՐԸՄՆԱՔԸ

9 (149).

Էմ յամա՛, էմ հիկկկէս յամա՛,
Պա՛րը մնաս, շէն գինաս, յամա՛,
Ցիրէյը պա՛նիտ մա՛ցիր, յամա՛,
Կիշիրը քնիտ մա՛ցիր, յամա՛,
Անօշ քօնիտ գդրիցիր, յամա՛,
Քէ աշկընէն խաթրը խօշ իրիր, յամա՛։
Էմ յաղա՛, էմ հիկկէս յաղա՛,
Պա՛րը մնաս, շէն գինաս, յաղա՛,
Էրգար ջամփուք գարճ գդրիցիր, յաղա՛,
Կիշիրը, ցիրէյը միգ իրիր,
Քէ աշկընէն խաթրը խօշ իրիր, յաղա՛։
Էմ ախպա՛ր, էմ հիկկէս ախպա՛ր,
Պա՛րը մնաս, շէն գինաս, ախպա՛ր,
Շա՛պաթ մը յառանճ Սուլթան բազարը իճար,
Քէ սէվգլուլի քուրը խաթրը խօշ ինիլը համար։
Էմ քուրի՛գ, էմ հիկկէս քուրի՛գ,
Պա՛րը մնաս, շէն գինաս, քուրի՛գ,
Զույկըր ինք, թաք մնացիր, քուրի՛գ,
Սա ընձի չըր վիլլիր, էմ քուրվըղէն գուվիլլիր

## ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

9 (149).

Իմ մայրի՜կ, իմ հոգիս մայրի՜կ,
Բարի մնաս, շեն կենաս, մայրի՜կ,
Ցերեկը գործից մնացիր, մայրի՜կ,
Գիշերը քնից մնացիր, մայրի՜կ,
Անուշ քունդ կորցրիր, մայրի՜կ,
Քո աղջկա սիրտը շահեցիր, մայրի՜կ։
Իմ հայրի՜կ, իմ հոգիս հայրի՜կ,
Բարի մնաս, շեն կենաս, հայրի՜կ,
Երկար ճամփեդ կարճ կտրեցիր, հայրի՜կ,
Գիշերն ու ցերեկը մեկ արեցիր,
Քո աղջկա սիրտը շահեցիր, հայրի՜կ։
Իմ եղբա՜յր, իմ հոգիս եղբա՜յր,
Բարի մնաս, շեն կենաս, եղբա՜յր,
Մի շաբաթ առաջ Մեծ շուկան իջար,
Քո սիրելի քրոջ սիրտը շահելու համար։
Իմ քույրի՜կ, իմ հոգիս քույրի՜կ,
Բարի մնաս, շեն կենաս, քույրի՜կ,
Զույգ էինք, մենակ մնացիր, քույրի՜կ,
Սա ինձ վայել չէր, իմ քրոջն էր վայել։

## ՀՈՒՐՍ ԱՌՆԻԼԸ ԻՐՔ

10 (150).

Աշխար աշկէյնը սազվուծ, նստած է,
Գա՛րմէր ծէն այարուծ, զարած նոնինէն,
Մուլուր, հա՛յ մար, մուլար,
Առէն, դա՛րէն զէ,
Շաքրում, միգրում մինծուծ աշկէյնը,
Առէն, դա՛րէն զէ։

11 (151).

Ա՜խ, Մայրում, հիկկա Մայրում,
Դունյա գյուզէլի, Մայրում,
Հուրս իղուր, ծէն նստուր,
Ծէռվէտ հինալը, Մայրում։

## ՀԱՐՍԻՆ ՏԱՆԵԼՈՒ ԵՐԳ

10 (150).

Շեկ աղջիկը զուգվել, նստել է.
Կարմիր ձին թամբած, կապված նանենոց,
Մի լաց, մայրի՛կ, մի լաց,
Առան, տարան նրան,
Շաքարով, մեղրով մեծացրած աղջկադ,
Առան, տարան նրան։

11 (151).

Ա՜խ, Մարիամ, հոգիս Մարիամ,
Աշխարհի սիրուն, Մարիամ,
Հարս եղար, ձի նստեցիր,
Ձեռներդ հինայած, Մարիամ։

## ՄԵՐԱՔԻԸ ԱՎԱԶԸ

### 12 (152).

Էյմ բալան իսկը բալա իր,
Ջա՜ն բալա, ջա՜ն բալա,
Է՜, է, էյմ բալան,
Մէռնէմ Կա՛վո՛րկիս,
Ֆախցր բալայիս,
Գուզինչիմ Կա՛վու՛րկիս,
Ծան չուդուս, Կա՛վու՛րկ,
Օ՜ֆ, օ՜ֆ, ջիգյարս, օ՜ֆ,
Դա՛րդիրիս մինձն իս, օ՜ֆ,
Կիշիր-ցիրիկ մայքիս գաս,
Էյմ բալաս, քուխցր բալաս,
Ա՜խ, ջիգյարըմ, ա՛խ Կավո՛րկս,
Յօ՞ րըր գարգիմ գկլատխիս,
Ջիգյարըմ, ա՛ր ուրթամ,
Դարդիրիս օ՞մ ուլամ,
Մէյմը չունէյմ ղաֆադանդա,
Մէյմ չըլմանէյր յէմ ղղան,
Ջքու մայր յօ՞ թաղիր, կա՛ցիր,
Քու դէգ վքու մայր թրղ թաղայն,
Վու մար յաս գրիէգ թըղ չըվառվիր,
Ըրք գիպլօմը դիր իրա դքիզ,
Տծն չալա չգտուցուր ղընիր քզի,
Ա՜խ ա՛ր. ուրթամ, ա՛ր ըկամ,
Վաշը քօուր մը գը սրդայս,
Արցօնք պուղըցնիս յիչուցիս, Կա՛վու՛րկ,
Կրդմանէտ իրվան գուզինչիմ Կա՛վու՛րկ,
Ծան չաւուդուս, Կա՛վու՛րկ չվա խուավաձիս,
Շուդ գիդանք կացիր իլլիցուր,
Հայաստանը խադէյն համչիցուր։

## ՄԳՈ ԵՐԳ

### 12 (152).

Իմ բալան ոսկի բալա էր,
Ջա՜ն բալա, ջա՜ն բալա,
Է՜, է, իմ բալան,
Մեռնեմ Գեորգիս,
Փախցր բալայիս,
Կանչում եմ Գեո՛րգիս,
Ձայն չես տալիս, Գեո՛րգ,
Օ՜ֆ, օ՜ֆ, հոգիս, օ՜ֆ,
Դարդերիս մեծն ես, օ՜ֆ,
Գիշեր-ցերեկ մաքիս ես,
Իմ բալաս, քաղցր բալաս,
Ա՜խ, հոգիս, ա՜խ Գեորգս,
Ո՞րտեղ ղարկեմ գլուխս,
Հոգի՜ս, ո՞ւր գնամ,
Դ՛իշաս ո՞ւմ պատմեմ,
Մեկը չունեմ որատկից,
Մեկը նման չէ իմ աղալին,
Քո մորը ծրանք թողեցիր, գնացիր,
Քո տեղ քո մորը թող թաղեին,
Քո մայրն այս կրակով չվառվեր,
Երեք դիպլոմի տեր դարձրի քեզ,
Դու քեզ ճար չկարողացար գտնել.
Ա՜խ, ո՞ւր գնամ, ո՞ւր գամ,
Մի մեծ քար կա սրտիս վրա,
Արցունք եմ թափում աչքերից, Գեորգ.
Գերեզմանիդ վրա կանչում եմ, Գեո՛րգ,
Ձայն չես տալիս, Գեո՛րգ, ինչո՞ւ խռովել ես,
Շատ տեղեր դու շրջեցիր,
Հայաստանի հողում հանգչեցիր։

## ՕՐՈՐԻՍՔԸ ԻՐՔ

### 13 (153).

Նանի՜, յավրում նանի՜...
Խօրօ խանդգէյն մրդինայն,
Գյալ-րախչասրն վարթինայն։
Նանի՜ յավրում, նանի՜...
Մամօյը կնից ոնձըոգէյն,
Դադայը կպիրի մինձ իսկէյն։
Նանի՜, յավրում, նանի՜...
Միր րադդա՛գէյն դփխինէյն,
Դայփիը հանը գջգէյն։
Նանի՜, յավրում, նանի՜...
Բաբղօն ցանուձ խնծրինէյն,
Խնծիր գուդը էյմ ծակէյն։
Նանի՜, յավրում, նանի՜...
Վիրը բագչայն մշմուշէյն,
Մինձէյր, քագը ղմշմուշնէյն։

## ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

### 13 (153).

Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Խոր ձորերի մրտենին,
Գյուլ-բալոչալի վարդենին։
Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Մայրը գնաց սնձակի,
Հայրը բերեց մեծ ոսկի։
Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Պատի տակի ափխենին,
Կարիր հանիր ճյուղերից։
Նանի՜, բալա՛ս նանի՜...
Պապի տնկած խնձորենին,
Միրգ է տալիս իմ ձագին։
Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Վերի այգու ծիրանին,
Մեծանա, քագի իմ որդին։

14 (154).

Նանիկ կինիմ իմ բալին,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ,
Նանիկ կասիմ իմ փաշին,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ։

14 (154).

Նանիկ կանեմ բալիկիս,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ,
Նանիկ կասեմ փաշայիս,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ։

15 (155).

Զէյմ քուխցը բալան զա̈րուրիմ,
Զէյմ քալաշ բալան զըբաոզըցնիմ,
Սուլթանը վարթում զըծածկիմ,
Անէյշ ըւքիրում զըմինձցընիմ։

15 (155).

Իմ քաղցր բալալիս կօրորեմ,
Իմ սիրուն բալալիս կքնացնեմ,
Կարմիր վարդով կծածկեմ,
Անուշ հոտով կմեծացնեմ։

16 (156).

Նա̈նէ, նազլը դզաս, նա̈նէ,
Նա̈նէ պա̈սիմ քէ,
Գըբաոզըցընիմ քէ անօշ քօն,
Համօ դաղալը դուկօ
Գըպէրէ քէ ղայիմ թօր։

16 (156).

Նանի՜, քնքուշ տղաս, նանի՜,
Նանի՜, կասեմ քեզ,
Կքնացնեմ քեզ անուշ քնով,
Շուտով հայրիկը կգա,
Կբերի քեզ ամուր թուր։

## ՋՈՒՋՕԽ ԽԱՂՑԸՆԻԼԸ ԻՐՔ

17 (157).

Ջամբըր-չումբըր Գաբաչէն,
Խարը խանդըղէն մըդինէն,
Պունցը լիոնէն ա̈ղդըրինէն,
Մամայը կնա̈ց սընձըսկէյն,
Բաբան իպիր մինձ իսկէյն։

## ՄԱՆԿԱԽԱՂԱՑԻ ԵՐԳ

17 (157).

Ջամբըր-չամբըր Կարաչէն,
Խոր ձորերի միջնին,
Բարձր լեռների ատամներին,
Մայրը գնաց սնձուկի,
Հայրը բերեց մեծ ոսկի։

## ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

18 (158).

Ծօյը՝ ձուկը,
Ջուփը՝ գրադէն,
Ղափաղիցէն խա̈ւփը,
Թըղ չառնի ղըա̈ղը,
Դըքըր ակօ վա̈ղը,
Պա̈րը ուկու ուղա̈ղը։

18 (158).

Ձուկը՝ ծովը,
Տապակը՝ կրակին,
Փակեցին խուփը,
Թող չառնի պաղը,
Մինչև ղա վաղը,
Բարով դա ուտողը։

19 (159).

Հաղալուլթ, հաղալուլթ հէյկ մը գ̊դա,
Կացա բալուչան վէյկ մը գ̊դա,
Վէյկ ձա̈գիցա, իշիցա,
Թըմբլիկ-մըմբլիկ հօուրս մը գ̊դա,
Հօուրս դարա փիսէն գըվա,
Փիսան ընծը գըըգ իդէյր,
Գըէյգ դարա փիդէյն դըվա,
Փուադ ընծը մա̈խէր իդէյր,
Մա̈խայր դարա թարլայն դըվա,
Թարլան ընծը ցիբլին իդէյր,
Ցիբէյն դարա հա̈վէօն դըվա,
Հէուվ ընծը հավգայթ իդէյր,
Հավգայթ դարա չարշէյն դըվա,
Չարշայն ընծը փարա իդէյր,
Փարան դարա բա̈բգօն դըվա,
Բա̈բա ընծը թօղ մը իդէյր։

19 (159).

Հեքիաթ, հեքիաթ մի հոլս գտա,
Գնացի պարտեզ, մի վեգ գտա,
Վեգը ծակեցի ու տեսա,
Թմբլիկ-մըմլիկ մի հարս գտա,
Հարսին տարա փեսին տվի,
Փեսան ինձ կրակ տվեց,
Կրակը տարա փայտին տվի,
Փայտն ինձ մոխիր տվեց.
Մոխիրը տարա արտին տվի,
Արտն ինձ ցորեն տվեց,
Ցորենը տարա հավին տվի,
Հավն ինձ հավկիթ տվեց,
Հավկիթը տարա շուկան տվի,
Շուկան ինձ փող տվեց,
Փողը տարա հորս տվի,
Հայրս ինձ գնդակ տվեց։

### ԳԱՎԱՁՈՒ ԻՐԳ*

20 (160).

*Հէ՜յ, հէ՜յ, Բըլլան Վանիս,*
*Թինէյր բա̈դա̈ղ Մալջըճ Օհանիս,*
*Ձակիր լիդա̈ղ Ալըր Վանիս,*
*Գուրլաշ շըճա̈ղ Բրղից Վանիս,*
*Թըմպա̈գ ղարգա̈ղ Դըրըս Օհանիս,*
*Ցանցօր վա̈սկա̈ղ Ղավէս Օհանիս,*
*Իմանա փիգրա̈գ Կա̈պպուշ Օհանիս,*
*Տօն բադա̈ղ Փասըրկ Վանիս,*
*Բաշինա ղիփող Բա̈չիր Օհանիս,*
*Ղուղաք արձա̈ղ Բաշըկ Փա̈նիս,*
*Տիգծ րա̈դրուսա̈ղ Ալօ Գիրագիս,*
*Ակռաք քիշա̈ղ Աբթիտ Վանիս,*
*Ձաս իրքն ավշա̈գ Ալօ Գիրագիս։*

### ԿԱՏԱԿԵՐԳ*

20 (160).

*Հե՜յ, հե՜յ, Բըլուն Վանես,*
*Թանիր շորող Մալղըչ Հովհաննես,*
*Ծիտ որսացող Ալո Վանես,*
*Կրիա շրջող Բրդից Վանես,*
*Թմբուկ զարկող Դըրըս Օհաննես,*
*Նոար վարող Ղավես Օհաննես,*
*Կաշիկ կարկատող Կապպուշ Օհաննես,*
*Պատ ծեփող Փասըրկ Վանես,*
*Բարխը կոփող Բաչիր Օհաննես,*
*Գառ արածող Բաշըկ Փանիս,*
*Դեղձ պատվաստող Ալո Կիրակոս,*
*Ատամ քաշող Ապտոտ Վանես,*
*Այս երգն երգող Ալո Կիրակոս։*

Գ.

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ԶԻՆՎՈՐԻ ՈՒ ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

### ՀԱԶՈՒՐ ԷՆԸ ՀԱՐԷՐ ԴԸՄՆԸՀԷՆԿ ԴԱՐԷՆ

1 (161).

*Էնվէր վէ Թալաթ աժգը փաշինէն*
*Սարաբ իդուն մըհաճըրըրկէն,*
*Բըթըն մաֆ իրէն էրմանը միլլաթէն,*
*Լիղվընէն թըղ չիրնիր՝ չվա՞ ղադացէն։*
*Հազուր էնը հարէր դըռնըհէնկ դարէն,*
*Իղավ փրթըվիլը Կիլիկը էրմանէն,*
*Ձա՞ միդք գունիր էն մախըըմ չուճըխնէն,*
*Ձառվընէն թըղ գըդըիր կըլընճ կիխուգնէն։*
*Ձո՞ւց մինք բըրմառնունք էրմանը չուջխնէն,*
*Ծöրը քարվիցուն հիդվէն քուրվըղէն,*
*Դիր գայնուղ չիղավ էրմանը միլլաթէն,*
*Ձո՞ւց մինք րըր մառնունք Կիլիկը բալէն։*
*Փէրմանէն հասավ միր յութը կէղէն՝*
*Մըհաճըր բըր ըննուն բըթըն կէդանդէն,*
*Ձա՞ իր միր միդքը՝ միր Ջարալ Մուսէն,*
*Ձո՞ւց մինք բըր մառնունք իհալէն հալէն,*
*Խուսքը լավիցուվ Յաղուբինց Եսայէն.*
*«Լե՛ռը թըղ ըննին,— ասաց կիդանդէն,—*
*Վէզ չըրըր ծռինք մինք միր դուշմանէն,*
*Նիդինք, նիդըդվէնք, միռնէնք միր խուզէն»։*

* * *

2 (162).

*Յութը ուր բայմանում ֆէրման կըվիցուվ,*
*Մէճլըսէն խարարնէն կիդանդէն հասուվ,*
*Մուսա լիռուն իհալին փարթիզան իգուվ,*
*Դուշմուն խլուքմըթէն կարշա գանիցաւ։*

### ՀԱԶԱՐ ԻՆՆ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԻՆ

1 (161).

*Էնվեր և Թալեաթ թուրք փաշաները*
*Պատճառ դարձան գաղթականության,*
*Ջնջային համայն հայ ժողովրդին,*
*Լեզուները չորանար՝ ինչո՞ւ ասացին։*
*Հազար ինն հարյուր տասնհինգ թվին,*
*Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,*
*Ի՞նչ մեղք ունեին մատաղ մանուկները,*
*Կտրվեր ձեռքը սուր խփողների։*
*Ինչպե՞ս մոռանանք հայ մանուկներին,*
*Ջուրը նետվեցին քույրերով միասին,*
*Տերություն անող չեղավ հայ ժողովրդին,*
*Ինչպե՞ս մոռանանք Կիլիկիո ողբերգությունը։*
*Հրամանը հասավ մեր յոթ գյուղերը՝*
*Գաղթական պիտի լինեն բոլոր գյուղացիները,*
*Ո՞րն էր մեր մեղքը՝ մեր Մուսա լեռան,*
*Ինչպե՞ս մոռանանք վիճակը հայության,*
*Եսայի Յաղուբյանի խոսքերը հնչեցին.*
*«Թող լեռ բարձրանանք,— ասաց բոլորին,—*
*Թշնամու առաջ մենք վիզ չենք ծռի,*
*Զարկենք, զարկվենք, մեր հողում մեռնենք»։*

* * *

2 (162).

*Յոթ օր պայմանով հրաման գրեցին,*
*Ժողովի որոշումը հասավ մեր գյուղերին,*
*Մուսա լեռան ժողովուրդը պարտիզան դարձավ,*
*Թշնամու կառավարության դեմ ելավ, կանգնավ։*

* Հորինված է համագյուղացիների մականունների շուրջը։